ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՏԱՎՈՒՇ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Սարդուրի II-ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու արդյունքում կառավարման ոլորտում անցում կատարվեց՝**

1) կենտրոնացված պետության
2) դաշնային կառավարման
3) համադաշնային կառավարման
4) ամբողջատիրական պետության

2 **Թվարկվածներից ո՞րը պատմական իրադարձության հետևանք չէ:**

1) Գրիգոր Մամիկոնյանի (661-685 թթ.) կառավարման խաղաղ ընթացքը պայմանավորված է եղել Քաղիսիայի ճակատամարտում արաբների պարտությամբ:
2) Արաբ խալիֆաների կողմից Հայաստանում արաբական տարրի բնակեցումը դժվարացրել է կենտրոնաձիգ պետության ստեղծումը:
3) Հայաստանում արաբական ցեղերի հաստատումը պատճառ է դարձել հայ նախարարական ուժերի արտագաղթին դեպի Փոքր Ասիա:
4) Աշոտ Բագրատունու (686-689 թթ.) օրոք խալիֆայության և Բյուզանդական կայսրության զորքերի ներխուժման հետևանքով Հայաստանի վիճակը վատթարացել է:

3 **Թվարկվածներից ո՞րն է 1970-1980-ական թվականների հայագիտության զարգացման արդյունք:**

1) «Սասունցի Դավիթ» էպոսի հրատարակումը ռուսերենով:
2) Պատմական, գրական թանգարանի ստեղծումը:
3) 12 հատորյա հանրագիտարանի հրատարակումը:
4) Գրողների միության ստեղծումը:

4 **Ո՞րը Ք.ա. 94 թ. հայ-պոնտական պայմանագրի հետևանք չէ:**

1) Հայաստանի և Պոնտոսի միջև սահմանային գետ ճանաչվեց Տիգրիսը:
2) Պոնտոսի արքայադուստր Կլեոպատրան ամուսնացավ Հայոց արքայի հետ:
3) Հայաստանը գործողությունների ազատություն ստացավ հյուսիսում, հարավում, արևելքում:
4) Հայ-պոնտական միացյալ ուժերը հարձակվեցին Կապադովկիայի վրա:

5 **Հայերի՝ միութենական հանրապետություններում տեղաբաշխվածությանը վերաբերող հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ։**

1) Հետպատերազմյան տարիներին հարյուրավոր հայ մասնագետներ Միջին Ասիայի, հատկապես Ղազախստանի խոպան հողերի յուրացման քաղաքականության արդյունքում հայտնվել են այնտեղ։
2) 1920-1930-ական թվականներին Խորհրդային Հայաստանից հետո Խորհրդային Ռուսաստանը եղել է ամենահայաբնակ հանրապետությունը ԽՍՀՄ-ում։
3) 1926 թվականին Ուկրաինայի ԽՍՀ-ում անցկացված մարդահամարի համաձայն հայաշատ քաղաքներ են եղել Խարկովը, Օդեսան, Կիևը։
4) Հայրենական պատերազմի տարիներին Ղրիմի հայությունը ստալինյան բռնությունների արդյունքում ենթարկվել է տեղահանության։

6 **Խորհրդային Հայաստանի կոլեկտիվացման քաղաքականությանը վերաբերող տրված հետևանքներից ո՞րն է սխալ։**

1) 1930 թ. իբրև «կուլակ» ունեզրկվեց 1100 տնտեսություն։
2) Հայաստանից արտագաղթեցին հազարավոր ընտանիքներ։
3) Հազարավոր գյուղացիներ հաց արտադրողից վերածվեցին սպառողի։
4) 1929-34 թթ. մանր եղջերավոր անասունների քանակը կրճատվեց 30 %-ով։

7 **Ո՞րն էր պարթև արքա Վաղարշ I-ի՝ հարևան երկրներում իր եղբայրներին գահ բարձրացնելու հիմնական նպատակը։**

1) Վերականգնել Աքեմենյան տերության սահմանները։
2) Ստեղծել դաշնակից երկրների զինակցություն ընդդեմ Պոնտոսի։
3) Չեզոքացնել Հայաստանից սպառնացող քաղաքական վտանգը։
4) Վերջ տալ իր թագավորությունում գահակալական կռիվներին։

8 **Ո՞ր պնդումն է սխալ։**

1) 19-րդ դարի 80-ական թվականներին զինված պայքարի գաղափարի կայացման հարցում վճռորոշ են եղել նաև Խրիմյան Հայրիկի իրականացրած ջանքերը։
2) 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության ամենաշատ հայերով բնակեցված վարչական միավորը Վանի նահանգն էր։
3) Վանի 1915 թ. ինքնապաշտպանության շնորհիվ 200 հազար վասպուրականցի փրկվել է և տարագրվել։
4) 19-րդ դարի 60-70-ական թվականներին հայ իրականության մեջ ձևավորվել են առաջին քաղաքական կուսակցությունները։

9 **Ք. ա. 94 թվականին Ծոփքի միավորմամբ Մեծ Հայքը դուրս է եկել՝**

1) Արևմտյան Եփրատի ափ
2) Արևմտյան Տիգրիսի ափ
3) Արևելյան Եփրատի ափ
4) Արևելյան Տիգրիսի ափ

10 **Արշակունի արքաներից ո՞վ է հրաժարվել Հայոց կաթողիկոսներին Կեսարիայում օծելու կարգից:**

1) Տիրան
2) Պապ
3) Վռամշապուհ
4) Տրդատ Մեծ

11 **Վահանանց ապստամբության արդյունքում Վահան Մամիկոնյանը պարսից շահի կողմից ճանաչվեց՝**

1) Հայր մարդպետ
2) մաղխազ
3) սպարապետ
4) մեծ դատավոր

12 **Որտե՞ղ չի եղել առաջնորդական աթոռ՝ մինչ Հայոց նվիրապետության հաստատումը:**

1) Սյունիք
2) Եդեսիա
3) Աղձնիք
4) Արտազ

13 **Որքա՞ն բուհ է գործել Հայաստանում 1991 թվականին:**

1) 11
2) 10
3) 16
4) 14

14 **Որքա՞ն հայ է Սփյուռքից տեղափոխվել Հայաստան 1946-1948 թվականներին:**

1) 70 000
2) 50 000
3) 90 000
4) 60 000

15 **Հռոմը ո՞ւմ է նշանակել Հայաստանի թագավոր Վաղարշ I-ից հետո։**

1) Միհրդատ
2) Բակուր
3) Սոհեմոս
4) Վոնոն

16 **Հայոց իշխաններից ո՞վ է կառուցել Թալինի նշանավոր եկեղեցին։**

1) Ներսեհ Կամսարական
2) Սմբատ Բագրատունի
3) Գրիգոր Մամիկոնյան
4) Համազասպ Մամիկոնյան

17 **Ի՞նչ առիթով է Ալեքսանդր Խատիսյանը ասել հետևյալ խոսքը.**

«Մենք կործանեցինք բռնության շղթան, իսկ այժմ եկել է ժամանակը՝ փշրելու տգիտության շղթան»։

1) Գիտության և արվեստի ինստիտուտի բացում։
2) Պետական համալսարանի բացում։
3) Հայաստանի Գիտական ինստիտուտի ստեղծում։
4) Մատենադարանի բացում։

18 **Ի՞նչ իրադարձության կապակցությամբ է հռոմեացի պատմիչը ասել հետևյալ խոսքը.**

«Արևելքում իրենց ամենից շատ հոգսեր են պատճառել հայերը»։

1) Տիգրան IV-ի թագավորման՝ որպես ինքնիշխան միապետի։
2) Արտաշես I-ի միավորիչ գործունեության։
3) Տիգրան II-ի նվաճողական քաղաքականության։
4) Արտավազդ II-ի անհնազանդության։

19 **Ինչպե՞ս է կոչվել այն գավառը, որտեղ կառուցվել է Արտաշատ մայրաքաղաքը։**

1) Արշարունիք
2) Բագավան
3) Ազնվաց ձոր
4) Ոստան Հայոց

20 **Ինչպե՞ս է կոչվել 701 թվականին ստեղծված՝ Հայաստանը, Վիրքը, Աղվանքը, Մերձկասպյան շրջաններն ընդգրկող վարչաքաղաքական միավորը։**

1) Աղուանք
2) Արմենիկա
3) Արմինիա
4) Առան

21 **Ի՞նչ հետևանք է ունեցել Սարգոն II-ի Ք. ա. 714 թվականի արշավանքը դեպի Ուրարտու։**

1) Արդինի–Մուսասիրում թալանվեց Խալդիի գլխավոր տաճարը։
2) Ասորեստանին միացվեց Ուրմիա լճի հյուսիս-արևմտյան հատվածը։
3) Վանի թագավորությունը ընդունեց Ասորեստանի գերիշխանությունը։
4) Կասեցվեց Ուրարտուի կողմից Ասորեստանի լիակատար շրջափակումը։

22 **450 թվականին Խաղխաղի ճակատամարտը ավարտվեց՝**

1) հայերի հաղթանակով։
2) հոների պարտությամբ։
3) աղվանների պարտությամբ։
4) պարսիկների հաղթանակով։

23 **V դարում տեղի ունեցած իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

ա. Դենշապուհի անցկացրած աշխարհագիրն Արևելյան Հայաստանում։
բ. Սահակ Պարթևի վախճանը։
գ. Արտաշատի եկեղեցական ժողովի գումարումը Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ։
դ. Հազկերտ II-ի գահակալության ավարտը։
ե. Մեսրոպ Մաշտոցի վախճանը։
զ. Վարդան Մամիկոնյանի, Վասակ Սյունու և մի շարք այլ նախարարների ժամանումը Տիզբոն։

1) ա, ե, բ, գ, դ, զ
2) բ, ե, ա, գ, զ, դ
3) ե, բ, դ, զ, գ, ա
4) գ, բ, ե, ա, զ, դ

24 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

ա. Նախագահական հանրապետության կառավարման մոդելի ավարտը ՀՀ-ում։
բ. Հայոց համազգային շարժում կուսակցության ստեղծումը։
գ. Հայաստանի անկախության հանրաքվեի անցկացումը։
դ. Գետաշենի պաշտպանությունը։
ե. Հենրիխ Պողոսյանի ընտրվելը ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար։
զ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ԼՂԻՄ մարզկոմի փետրվարի 20-ի որոշման ընդունումը։

1) դ, զ, ե, գ, ա, բ
2) զ, ե, բ, դ, գ, ա
3) բ, դ, ե, ա, զ, գ
4) ե, զ, բ, դ, գ, ա

25 **Վարդանանց ապստամբության ժամանակ ստեղծված կառավարության նախարարի անունը համապատասխանեցրե՛ք զբաղեցրած պաշտոնին։**

Անուն	*Պաշտոն*
1) Վարդան Մամիկոնյան	ա. մաղխազ
2) Վասակ Սյունի	բ. սպարապետ
3) Խորեն Խորխոռունի	գ. մեծ դատավոր
4) Հովսեփ Վայոցձորցի	դ. հայր մարդպետ
	ե. մարզպան

1) 1-բ, 2-ե, 3-ա, 4-գ
2) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա
3) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
4) 1-բ, 2-ա, 3-ե, 4-գ

26 **Հունահռոմեական պատմիչի անունը համապատասխանեցրե՛ք Հայաստանի և հայերի մասին արած նրա վկայությանը։**

Պատմիչ

ա. Տակիտոս
բ. Պոլիբիոս
գ. Քսենոփոն
դ. Ստրաբոն

Վկայություն

1. «Հայաստանն աճել է Արտաշեսի ջանքերով, և ուստի այստեղ բոլորը միալեզու են»։
2. «…գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ»։
3. «Արտաշատ քաղաքում հայոց մեծամեծների հավանությամբ և շուրջը հավաքված բազմության ներկայությամբ նրա գլխին դրվեց թագավորական զարդանշանը»։
4. «Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»։
5. «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ»։

1) ա-1, բ-4, գ-5, դ-3
2) ա-3, բ-5, գ-2, դ-1
3) ա-2, բ-5, գ-4, դ-3
4) ա-4, բ-3, գ-2, դ-5

27 **Թեոդորոս Ռշտունու կառավարման շրջանին վերաբերող հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ։**

1) Հայոց իշխանը վերամիավորել է Հայաստանի արևելյան և արևմտյան մասերը։
2) Հայոց իշխանը վարել է բյուզանդամետ քաղաքականություն կառավարման ողջ ընթացքում։
3) Հայոց իշխանի նստավայրը Դվին քաղաքն էր, որտեղից իրականացվում էր երկրի պաշտպանությունը։
4) Հայոց զորքը Արծափ ամրոցում պարտության է մատնել պարսկական զորքին։

28 **Հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ։**

1) 1988 թ. փետրվարի 21-ի ԽՄԿԿ կենտկոմի՝ «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշումով հայության շարժումը որակվել է «ծայրահեղական»։
2) Հայոց համազգային շարժում կուսակցությունը վերջ է դրել կոմունիստական մենատիրությանը։
3) 1987 թվականի նոյեմբերին Մոսկվա է ուղարկվել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու արցախցիների պահանջագիրը։
4) Հայաստանի կոմկուսի կենտկոմի լիագումար նիստի որոշմամբ առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանին փոխարինել է Կարեն Դեմիրճյանը։

29 **Հայաստանում Արաբական խալիֆայության տիրապետության շրջանին վերաբերող հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ։**

1) Հերթ ոստիկանի անցկացրած աշխարհագրով հոգևորականությունը ազատվել է հարկ վճարելուց։
2) Հայոց իշխանի և Հայոց սպարապետի պաշտոններն որպես կանոն զբաղեցրել են Պահլավունիները։
3) 703 թվականի հակաարաբական ապստամբությունը գլխավորել է Աշոտ Բագրատունին։
4) 748-750 թթ. հակաարաբական ապստամության կազմակերպիչներից Դավիթ Մամիկոնյանը սպանվել է խալիֆի հրամանով։

30 **Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ։**

1) Կիլիկիայի իշխանության և թագավորության գոյության ընթացքում ազատ հիմունքներով գործել են առաքելական, ուղղափառ, կաթոլիկ ու ասորի Հակոբիկ եկեղեցիները։
2) 1066 թվականին ամենայն Հայոց եկեղեցու կաթողիկոսական աթոռը հաստատվել է Քեսունում։
3) Ռուբենը 1080 թվականին Դաշտային Կիլիկիայում հիմնել է հայկական իշխանություն։
4) Ռուբինյան իշխաններից Կոստանդինին խաչակիրները շնորհել են սեբաստոս տիտղոսը։

31 **Հայկական պահանջատիրությանը վերաբերող հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ։**

1) Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման միջազգային գործընթացը սկսվել է 1965 թվականին՝ Ֆրանսիայից։
2) Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Չորեքչյանի մասնակցությամբ 1965 թվականի ապրիլի 24-ին տեղի է ունեցել սգո կառավարական նիստ Օպերայի և բալետի թատրոնի շենքում։
3) Մինչև 1965 թվականը ԽՍՀՄ-ում արգելված է եղել Հայոց ցեղասպանության մասին խոսելն ու գրելը։
4) 1965 թվականի ապրիլի 24-ին ԽՄԿԿ Կենտկոմը հաստատել է «Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված միջոցառումների» ծրագիրը։

32 **Հայ վրիժառուներից ո՞վ է ասել հետևյալ միտքը.**

«…հայ անհատի պատերազմը թուրքին դեմ»։

1) Գուրգեն Յանիկյան
2) Սողոմոն Թեհլիրյան
3) Արշավիր Շիրակյան
4) Գևորգ Աճեմյան

33 **Վանի թագավորության արքաներից ո՞ւմ մասին է Ասորեստանի զորքերի հրամանատարը արել հետևյալ խոստովանությունը.**

«….անունն անգամ ահարկու է որպես ծանր հողմ, նրա ուժերը մեծաքանակ են»։

1) Սարդուրի I
2) Արգիշտի I
3) Սարդուրի II
4) Արգիշտի II

34 **Ե՞րբ է Հենրիխ Պողոսյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում ասել հետևյալ խոսքերը։**

«…Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները…»։

1) 1988 թ. հունիսի 15
2) 1989 թ. հունվարի 11
3) 1989 թ. մայիսի 25
4) 1988 թ. հուլիսի 18

35 **Ընտրե՛ք տերմինների ճիշտ բացատրությունները։**

1) Վաղ միջնադարում ազնվականության մասնատիրական տնտեսությունը կոչվում էր նորք։
2) Հայաստանում հորից որդուն ժառանգաբար անցնող խոշոր մասնավոր հողատեսակը կոչվում էր գանձագին։
3) Միջնադարում եկեղեցուն վճարվող հարկատեսակը կոչվում էր տասանորդ։
4) Թագավորի կողմից ծառայության դիմաց որպես շնորհում ստացված հողային տիրույթը կոչվում էր պարգևականք։
5) Գահնամակը միջնադարյան փաստաթուղթ էր, որով սահմանվում էր պատերազմի ժամանակ յուրաքանչյուր նախարարի տրամադրած զորքի քանակը։

36 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են սխալ։**

1) «Կուսակցական զգոնությունը» քաղաքական բռնաճնշումների տարիներին կուսակից ընկերների նկատմամբ անհիմն ու սուտ տեղեկությունների տարածումն էր, վարկաբեկումը, մատնությունը։
2) Խորհրդային պատմության մեջ Նիկիտա Խրուշչովի վարած քաղաքականությունը կոչվում էր «լճացում»։
3) Կոլեկտիվացումը թեթև արդյունաբերական ձեռնարկությունների միավորումն էր խոշոր տնտեսությունների մեջ։
4) 1920-ական թթ. սկզբին խորհրդային իշխանությունների զանգվածային բռնագրավումների և դրանց ընթացքում թույլ տրված չարաշահումների քաղաքականությունը կոչվում էր «ռազմական կոմունիզմ»։
5) Խորհրդային միությունում ունևոր գյուղացուն անվանում էին «կուլակ»։

37 **Որո՞նք են 1937-1938 թվականների հայրենադարձության դադարեցման գլխավոր պատճառները։**

1) ԽՍՀՄ-ի՝ Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու հայտարարությունը։
2) Սառը պատերազմի իրողությունը։
3) Միջազգային նախապատերազմյան լարված իրավիճակը։
4) ԽՍՀՄ-ում Հայ դատի համար պայքարի անհնարինությունը։
5) Անհատի պաշտամունքի դրսևորումները։

38 **Գտնել ճիշտ պատասխանները.**

Մեպտիմիոս Սևերոսի և Վաղարշ II–ի միջև կնքված պայմանագրի արդյունքում՝

1) հռոմեական լեգեոնները դուրս բերվեցին Հայաստանից։
2) կայսրը պարտավորվեց գումար վճարել Կովկասյան լեռնանցքների և մերձակա տարածքների պաշտպանությունը իրականացնող Հայոց այրուձիին։
3) Հայաստանը դարձավ «Հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ»։
4) Հռոմը օժանդակեց Հայաստանին Սասանյանների դեմ պայքարում։
5) կայսրը ճանաչեց Հայոց արքայի իրավունքները Հյուսիսային Միջագետքում։

39 **Արտաշես I-ի կառավարման շրջանին վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) ՀՀ տարածքում հայտնաբերվել է Արտաշես I-ի թողած 20 պահլավերեն սահմանաքար։
2) Արտաշես I-ը արշավել է Կասպից երկիր և Մեծ Հայքին միավորել հայկական Գուգարք նահանգը։
3) Արտաշես I-ը ընդարձակել է Փոքր Հայքի տարածքը ի հաշիվ Պոնտոսի։
4) Արտաշես I-ը նորակառույց մայրաքաղաքը բնակեցնելու համար այստեղ է տեղափոխել Երվանդաշատի, Արմավիրի, Տիգրանակերտի բնակչությանը։
5) Մովսես Խորենացու հաղորդմամբ Արտաշես I-ը հարավային կողմի զորքի իշխանությունը վստահել է իր զորավար Սմբատին։

40 **Խորհրդային Հայաստանի պատմությանը վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են սխալ։**

1) Գյուղատնտեսության կոլեկտիվացման կուրսը ընդունվել է 1925 թվականի դեկտեմբերին հրավիրված ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարում։
2) Մեծամորի հայկական ատոմակայանը գործարկվել է 1976 թվականին։
3) Առաջին հնգամյակի վերջին գյուղացիության կոլետկտիվացման գործընթացը ավարտվել է Հայաստանում։
4) 1960-1970-ական թվականներին Հայաստանում կառուցվել են Աբովյան, Չարենցավան, Քաջարան, Ջերմուկ քաղաքները։
5) 1950-ական թվականներին կառուցվել են Արզնի-Շամիրամ, Թալինի, Կոտայքի ջրանցքները։

41 **Գտե՛ք այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1) Բագրատունյաց թագավորության հռչակումը Հայաստանում:
2) Վասպուրականի թագավորության առաջացումը:
3) Տաշիր-Զորագետի թագավորության առաջացումը:
4) Սյունիքի թագավորության առաջացումը:
5) Վանանդի թագավորության առաջացումը:

42 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Յակով Զարոբյանի դառնալը Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար:
2) «Ազգային միացյալ կուսակցություն» գաղտնի կազմակերպության ստեղծումը:
3) Անդրանիկ Մարգարյանի դատապարտումը որպես հակախորհրդային գործիչ:
4) Ստալինի պաշտամունքի քննադատությունը ԽՄԿԿ XX համագումարում:
5) Ազգային միացյալ կուսակցության ղեկավար մարմնի՝ խորհրդի ստեղծումը:

43 **Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները համապատասխանեցրե՛ք տարեթվերին:**

Իրադարձություն	*Տարեթիվ*
ա. Տիգրան VI-ի բարձրանալը Հայոց գահին	1) 62 թվական
բ. Պետոս զորավարի մուտքը Հայաստան	2) 64 թվական
գ. Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի սկիզբը	3) 61 թվական
	4) 60 թվական
դ. Տրդատի և 3000 հեծյալների ուղևորությունը Հռոմ	5) 65 թվական
ե. Կորբուլոնի և պարթև Արշակունիների բանակցությունները խաղաղության պայմանագրի շուրջ	6) 54 թվական

ա	բ	գ	դ	ե

44 **Հեղինակի անունը համապատասխանեցրե՛ք ստեղծագործության անվանը։**

Ստեղծագործություն	*Հեղինակ*
ա. «Ալմաստ» օպերա	1) Գաբրիել Սունդուկյան
բ. «Անուշ» օպերա	2) Արամ Խաչատրյան
գ. «Սպարտակ» բալետ	3) Ալեքսանդր Սպենդիարյան
դ. «Նամուս» վեպ	4) Ալեքսանդր Շիրվանզադե
ե. «Պեպո» պիես	5) Տիգրան Չուխաճյան
	6) Արմեն Տիգրանյան

ա	բ	գ	դ	ե

45 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «ճիշտ է, «սխալ է», «չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը։**

1) Ստրաբոնի հաղորդմամբ հայերը խեղդամահ են արել Ալեքսանդրի զորավարներից Մենոնին։
2) Ք. ա. VII դարում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնված Հայկազունների ավագ ճյուղի իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրներում հիշատակվող Արմե-Շուբրիա պետական կազմավորմանը։
3) Մովսես Խորենացու հաղորդմամբ Պարույր Սկայորդին միավորել է Ուրմիա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքը։
4) Տիգրան I Երվանդյանի իշխանությունը բուն Հայաստանից բացի տարածվել է Կապադովկիայի, Վրաստանի, Աղվանքի վրա։
5) Տիգրան I Երվանդյանի մահից հետո՝ Ք. ա. 525 թվականին, Հայաստանը ճանաչել է Աքեմենյանների գերիշխանությունը։
6) Մեզ հասած հայկական առաջին արքայական դրամները հատել է Երվանդ II-ը։

46 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները:**

ա. Բեհիսթունյան եռալեզու արձանագրության բաբելեներեն մասում Հայաստանը անվանվում է Ուրարտու:
բ. Տուշպա քաղաքում Ռուսա I-ի կառուցած 25 կմ երկարությամբ ջրանցքը կոչվում էր «Ռուսայի ծով»:
գ. Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի կառավարիչը կոչվում էր ստրատեգոս:
դ. Արգիշտի I–ի զորքերը շարունակել են հաղթարշավը դեպի Ալիշտու, այսինքն՝ Ալաշկերտի հովիտ:
ե. Ուրարտական տաճարային տեսակներից մեկը կոչվում էր «Աստծո դարպաս»:
զ. Վանի համահայկական թագավորության մեջ արքային կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին փոխարքաներ:
է. Վանի թագավորությունը բաժանված էր խոշոր վարչական միավորների, որոնց անվանում էին նահանգներ:
ը. Վանի թագավորությունը Աստվածաշնչում անվանվում է «Արարատյան թագավորություն»:

1) ա, ե, ը
2) բ, զ, ը
3) դ, ե, է
4) գ, դ, զ

47 **Տերմինները համապատասխանեցրե՛ք իրենց բովանդակությանը:**

Տերմին	*Բացատրություն*
1) գունդստաբլ	ա. թագաժառանգի խնամակալ կիլիկյան արքունիքում
2) պայլ	բ. բանակի ընդհանուր հրամանատար Կիլիկիայում
3) մարզպանական գունդ	գ. մանրավաճառ առևտրական
4) այրուձի	դ. քաղաքի կառավարիչ
5) աթաբեկ	ե. իշխաններին ենթակա զորք
6) գութան	զ. հեծյալ
7) փերեզակ	է. հողի մշակման մեջ կիրառվող ծանր երկրագործական տեխնիկա
	ը. թագաժառանգի խնամակալ վրացական արքունիքում

1) 1-բ, 2-ա, 3-ե, 4-զ, 5-ը, 6-է, 7-գ
2) 1-ը, 2-ա, 3-բ, 4-գ, 5-դ, 6-է, 7-զ
3) 1-ա, 2-դ, 3-է, 4-բ, 5-ը, 6-գ, 7-զ
4) 1-ը, 2-ա, 3-ե, 4-գ, 5-է, 6-բ, 7-դ

48 **Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

ա. Խառանի ճակատամարտի հետևանքով թուլացան Հռոմի դիրքերը Արևելքում:
բ. Ապամեայի պայմանագրով Հռոմը հօգուտ սելևկյանների հրաժարվեց Փոքր Ասիայից:
գ. Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական զեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրել է Հայոց թագավոր Արտավազդ II-ի դավաճանությամբ:
դ. Արտաշես I-ի կողմից անցկացված հողային բարեփոխման հետևանքով վերացվեցին ավագանու հողատիրական իրավունքները:
ե. Տիգրան Մեծի նվաճումների հետևանքով Սելևկյան Ասորիքն ու Պարթևստանը տարածաշրջանում իրենց դիրքերը զիջեցին Հայաստանին:
զ. Հռոմի դիրքերն Արևելքում թուլացնելու համար Արտաշես I-ը օժանդակեց Տիմարքոսի ապստամբությունը:
է. Հայաստանը պարթևների արշավանքից և ավերածությունից զերծ պահելու նպատակով Արտաշես II-ը ռազմական դաշինք կնքեց Հրահատ IV-ի հետ:

1) ե, զ, է
2) ա, գ, ե
3) բ, գ, զ
4) բ, դ, է

49 **Տրվածներից որո՞նք են արդյունաբերացման քաղաքականության հետևանքներ Խորհրդային Հայաստանում:**

ա. Կառուցվեց ինժիներատեխնիկական բարդ կառուցվածքով և ճնշումային հզորությամբ ԽՍՀՄ առաջին հէկը Երևանում:
բ. Պլանավորված տնտեսավարման շնորհիվ Գյումրին դարձավ ծանր արդյունաբերության կենտրոն:
գ. Հնգամյա պլանների արդյունքում Խորհրդային Հայաստանը դարձավ արդյունաբերության, խոշոր կոլտնտեսությունների, մշակույթի առաջավոր երկիր:
դ. 1926-1929 թթ. ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններ բացվեցին Նոր Բայազետում, Վանաձորում, Արարատում:
ե. Մանր արդյունաբերության համախառն արտադրանքն աճեց 3, իսկ խոշոր արդյունաբերությունը՝ 4,5 անգամ:
զ. 1927 թվականին շահագործման հանձնվեց Երևանի կարբիտի գործարանը:
է. Երկրորդ հնգամյակում Հայաստանում կառուցվեց 36 արդյունաբերական ձեռնարկություն:

1) դ, զ, է
2) ա, գ, է
3) բ, դ, ե
4) գ, ե, զ

50 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը:**

ա.Դվինի ազատագրումը թյուրք-սելջուկներից:
բ. Վրացական զորքի կողմից Անիի առաջին գրավումը Շադադյաններից:
գ. Չարմաղանի գլխավորությամբ մոնղոլական գլխավոր արշավանքը Հայաստան:
դ. Տաշիր-Զորագետի թագավորության անկումը:
ե. Սարգիս Զաքարյանի՝ սպարապետի պաշտոնի ստանձնումը վրաց արքունիքում:
զ. Չմանկատուկի ճակատամարտը:
է. Դավիթ Շինարարի գահակալման սկիզբը:

1) է
2) ա
3) գ
4) ե

51 **1980-1990-ական թվականներին տեղի ունեցած իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը:**

ա. «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը:
բ. Ռոբերտ Քոչարյանի առաջին անգամ ընտրվելը ՀՀ նախագահ:
գ. Կոմունիստական միակուսակցական համակարգի ավարտը Հայաստանում:
դ. «Օղակ» ռազմական գործողության իրագործումը:
ե. Բաքվի հայության կոտորածը:
զ. Սումգայիթյան ոճրագործությունը:
է. Սուրեն Հարությունյանի ընտրվելը ՀՀԿ կենտկոմի առաջին քարտուղար:

1) բ
2) գ
3) ե
4) դ

52 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Չորրորդ հնգամյա պլանի սկիզբը:
բ. Քանաքեռի ալյումինի գործարանի առաջին հերթի գործարկումը:
գ. Վեցերորդ հնգամյա պանի ավարտը:
դ. ԽՄԿԿ 21-րդ համագումարը:
ե. Երկրորդ հնգամյա պլանի մեկնարկը:
զ. Լենինականի հէկի կառուցման ավարտը:
է. ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարը:

1) ա, ե, զ, է, գ, բ, դ
2) է, զ, ե, ա, բ, դ, գ
3) ե, ա, է, զ, բ, գ, դ
4) զ, է, ե, ա, բ, դ, գ

53 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

ա. Հովհաննես Չյոմուրճյան
բ. Մովսես Բաղրամյան
գ. Գևորգ Ե Սուրենյանց
դ. Արամ Մանուկյան
ե. Իսրայել Օրի
զ. Նիկոլ Աղբալյան
է. Ներսես Գ Տայեցի

1. Զվարթնոցի տաճարի կառուցման պատվիրատու
2. Ռուսական կողմնորոշման հիմնադիր
3. Վանի 1915 թ. ինքնապաշտպանության ղեկավար
4. Հայոց կաթողիկոս Սարդարապատի հերոսամարտի օրերին
5. Առաջին հանրապետության կրթության նախարար
6. Մադրասի խմբակի անդամ
7. Պահպանողական ուղղության ներկայացուցիչ
8. Առաջին հանրապետության վարչապետ

1) ա-3, բ-5, գ-1, դ-6, ե-2, զ-8, է-4
2) ա-3, բ-5, գ-1, դ-6, ե-2, զ-8, է-4
3) ա-7, բ-5, գ-4, դ-3, ե-8, զ-2, է-1
4) ա-7, բ-6, գ-4, դ-3, ե-2, զ-5, է-1

54 **«Ղարաբաղ» կոմիտեի վերաբերյալ ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր անդամներն էին Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Վազգեն Սարգսյանը:
բ. 1988 թվականի մայիսի 31-ին «Ղարաբաղ» կոմիտեն վերանվանվել է «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե»:
գ. Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն վերակազմավորվել է «Հայ ազգային միություն» շարժման:
դ. Հայոց համազգային շարժման նպատակներից մեկը Լեռնային Ղարաբաղի միացումն էր Հայաստանին:
ե. 1988 թվականի օգոստոսի 19-ին հրապարակված «Ղարաբաղ» կոմիտեի պայքարի ծրագիրը դարձել է Հայոց համազգային շարժման առաջին համագումարում ընդունված ծրագրի հիմք:
զ. «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավար Ռոբերտ Քոչարյանն ընտրվել է Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ:
է.1988 թվականի մայիսի 31-ին «Ղարաբաղ» կոմիտեին անդամակցել են Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը:

1) դ, ե, է
2) ա, բ, է
3) բ, դ, ե
4) գ, ե, զ

55 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ։**

ա. Գիտությունների ակադեմիայի հիմադիր ժողովում Վիկտոր Համբարձումյանը ընտրվել է ՀՍԽՀ ԳԱ նախագահ։
բ. 1928 թվականին ԵՊՀ-ին կից բացվել է ասպիրանտուրա, որը տվել է գիտական կադրեր պատրաստելու հնարավորություն։
գ. ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղը հիմնադրվել է 1938 թվականին։
դ. Աբրահամ Ալիխանյանը առաջ է քաշել մութ միջավայրում լույսի սփռման նոր տեսություն, որը գործնական կիրառում է ստացել ռազմական գործում։
ե. Հայրենական մեծ պատերազմի տարիներին Երկրաբանության ինստիտուտում քարտեզագրվել է Անդրկովկասի և Հայաստանի տեղանքը։
զ. 1941 թվականին ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղում գործել են 14 գիտահետազոտական հիմնարկներ։
է. ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի առաջին նախագահը եղել է բնագետ-երկրաբան Լևինսոն-Լեսսինգը։

1) բ, գ, զ
2) ա, բ, գ
3) բ, ե, է
4) ե, զ, է

56 **Մեծ Հայքի Արշակունի արքաների կառավարման շրջանին վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ։**

ա. Վաղարշ II թագավորը կարողացել է պահպանել չեզոքություն Հռոմեական կայսրությունում ընթացող գահակալական կռիվների նկատմամբ։
բ. Տրդատ I-ի կառավարման օրոք՝ 76 թվականին, Կովկասից Մեծ Հայքի թագավորություն են ներխուժել ալանները։
գ. Սանատրուկ Արշակունին Արածանի գետի ափին՝ Մշո դաշտում, կառուցել է Մծուրք քաղաքը։
դ. Վաղարշ II-ը Արարատյան դաշտում Շրեշ բլրի վրա տարածվող Վարդգեսավան գյուղաքաղաքը հռչակել է Արշակունյաց թագավորության երկրորդ մայրաքաղաքի։
ե. Հայոց արքա Սանատրուկը մահացել է 110 թվականին և թաղվել Բարձր Հայք նահանգի Դարանաղի գավառի Անի բերդում։
զ. Վաղարշապատում Հայոց զորքի և նախարարների ներկայությամբ Տրդատ III Մեծը Վրթանես Ա Պարթևին կարգել է քահանայապետ։
է. Պարթևները Բակուր Արշակունու Հայոց գահին բարձրանալը համարել են Հռանդեայի պայմանագրի խախտում և գահընկեց են արել նրան։

1) գ, դ, է
2) ա, գ, ե
3) բ, դ, զ
4) ե, զ, է

57 **Խորհրդային Հայաստանի գիտության և մշակույթի մեջ մեծ ներդրում ունեցած հայ մտավորականին համապատասխանեցրե՛ք իր մասնագիտությանը։**

Գիտնական	*Մասնագիտություն*
ա. Աշոտ Հովհաննիսյան	1) լեզվաբան
բ. Վահրամ Փափազյան	2) երգիչ
գ. Փանոս Թերլեմեզյան	3) պատմաբան
դ. Ստեփան Ղամբարյան	4) էներգետիկ
ե. Արտեմ Ալիխանյան	5) երկրաբան
զ. Հրաչյա Աճառյան	6) դերասան
է. Հովսեփ Տեր-Աստվածատրյան	7) քիմիկոս
ը. Հովհաննես Բադալյան	8) նկարիչ
	9) ֆիզիկոս

1) ա-3, բ-6, գ-8, դ-7, ե-9, զ-1, է-4, ը-2
2) ա-1, բ-6, գ-3, դ-7, ե-5, զ-8, է-9, ը-2
3) ա-9, բ-3, գ-8, դ-7, ե-5, զ-2, է-4, ը-6
4) ա-7, բ-8, գ-3, դ-9, ե-5, զ-1, է-2, ը-6

58 **Տերմինների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ։**

1) Արշակունյաց արքունիքում սահմանապահ զորավարության կուսակալին անվանում էին բդեշխ։
2) Բագրատունյաց Հայաստանի արքունիքում օտար երկրների թագավորների հետ բանակցող պաշտոնյային անվանում էին իշխանաց իշխան։
3) Արշակունյաց շառավիղներից ձևավորված ազնվական խավը կոչվում էր տերունի։
4) Աշխարհաժողովը Հայոց թագավորի և նախարարների համատեղ ժողովն էր, որը սահմանում էր երկրի համար առավել կարևոր խնդիրները։
5) Մեծ Հայքի Արշակունյաց արքունիքում պալատական արարողությունների և դեսպանների ընդունելության համար պատասխանատու գործակալին անվանում էին թագադիր ասպետ։
6) Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունում հազարապետություն գործակալությունը տնտեսական-հարկային վարչություն էր, որը տնօրինում էր նաև պետական պարհակների կատարումը։
7) Արշակունյաց արքունիքում կալվածքների և գանձարանի համար պատասխանատու գործակալին անվանում էին տանուտեր։
8) Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունում արքունի և թագավորական պահակազորի հրամանատարին անվանում էին մաղխազ։

59 **Հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ։**

1) Այլախոհական շարժումը Հայաստանում սկզբնավորած խումբը կոչվում էր «Հայ երիտասարդական միություն»։
2) «Ազգային միացյալ կուսակցություն» գաղտնի կազմակերպության հրապարակած թերթը կոչվում էր «Փարոս»։
3) Հայաստանի օգնության կոմիտեն 1906 թվականին Հովհաննես Թումանյանի կողմից հիմնադրված բարեգործական միություն է։
4) ԱՍԱԼԱ-ն Սփյուռքում ձևավորված Հայաստանի ազատագրության հայկական գաղտնի բանակն էր։
5) Հայկական ցեղասպանության արդարության մարտիկները սփյուռքահայ կազմակերպություն էր, որի պայքարն ուղղված էր թուրք պաշտոնատար անձանց դեմ։
6) 1925 թվականին Էջմիածնի մատենադարանի և թանգարանի հիմքի վրա ստեղծված գիտահետազոտական կենտրոնը կոչվում էր Գիտության և արվեստի ինստիտուտ։
7) Հայկական բարեգործական ընդհանուր միությունը ամերիկահայերի հիմնադրած հայրենակցական միություն է, որի պայքարը ուղղված է Հայ դատին։

60 **Տրվածներից որո՞նք են հանդիսացել Հայաստանում Բագրատունյաց թագավորության հռչակման նախադրյալներ։**

1) Բյուզանդիայի աջակցությունը խալիֆայության կենտրոնախույս ուժերին։
2) Տնտեսապես և ռազմապես զորեղացած հայ նախարարների անկախության ձգտումը։
3) Բյուզանդիայի հետ դավանաբանական միությունը, որը թույլ էր տալիս ռազմական օգնություն ստանալ կայսրությունից։
4) Կենտրոնական իշխանության դիրքերի խարխլումը Արաբական խալիֆայությունում։
5) Արևմտաեվրոպական քրիստոնեական երկրների և Հայոց եկեղեցու միջև ձեռք բերված փոխօգնության համաձայնագիրը։
6) Հայ ժողովրդի միասնական կամքը անկախության վերականգնման գաղափարի շուրջ։
7) Ատրպատականի ամիրա Բաբեկի ցուցաբերած ռազմական օգնությունը։

61 **Ինչպիսի՞ տնտեսական, մշակութային, քաղաքական հետևանքներ է ունեցել Արշակունիների գահակալության շրջանը Մեծ Հայքում։**

1) Տայքը միացվեց Հռոմեական կայսրությանը։
2) Դրվեց հայ մատենագրության ստեղծման հիմքերը։
3) Հայոց մայրաքաղաք հռչակվեց Վաղարշապատը։
4) Կառուցվեց Արուճի Սբ Գրիգոր եկեղեցին։
5) Լայն տարածվեց հողի մշակման եռադաշտային համակարգը։
6) Կառուցվեց Մայր տաճար Սբ Էջմիածինը։
7) Մեծ Հայքի թագավորությունը բաժանվեց Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև։

62 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Այլակրոն միջավայրի շնորհիվ հայերի ուծացման վտանգը մերձավորարևելյան երկրներում ավելի թույլ է արտահայտված եղել՝ ամերիկյան և եվրոպական երկների համեմատ։
2) Մադրասի խմբակի անդամները առաջ են քաշել միապետական կառավարման համակարգի գաղափարը։
3) Ռուսատանի օգնությամբ Հայաստանի ազատագրության ծրագիրը հայ իրականության մեջ ձևավորվել է XVIII դարի սկզբին։
4) Վաղ միջնադարում պետության գլխավոր հարկատուն և հիմնական արտադրող տնտեսությունները եղել են գյուղական համայնքները։
5) Մեսրոպյան նշանագրերի գյուտին հաջորդել է համաշխարհային գրական և գիտական երկերի թարգմանությունները։
6) Միքայել Նալբանդյանը, Ստեփանոս Նազարյանը, Գրիգոր Արծրունին պահպանողական գաղափարախոսության հիմնադիրներն են արևմտահայ իրականության մեջ։
7) 1918 թվականի մայիսի 15-ին Ալեքսանդրապոլում հայկական զորքը ծանր պարտության է մատնել թուրքական բանակին։

63 **Հետևյալ պնդումներից որո՞նք են սխալ։**

1) Խորհրդային շրջանի նշանավոր ճարտարապետներ էին Ռաֆայել Իսրայելյանը, Նիկողայոս Նիկողոսյանը, Կարո Հալաբյանը։
2) 1923 թվականին ԽՍՀՄ-ում անցկացված առաջին մարդահամարով վեր է հանվել քաղաքային բնակչության զբաղվածության պատկերը։
3) 1930-ական թթ. կեսերին Պիատրովսկու ղեկավարությամբ հնագիտական պեղումներ են սկսվել Ամբերդ ամրոցում։
4) 2019 թվականի դեկտեմբերի 12-ին ԱՄՆ Սենատի կողմից ընդունվել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև։
5) 2015 թվականի մայիսի 24-ին ընդունվել է Հայոց ցեղասպանության ճանաչման Գերմանիայի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի համատեղ հռչակագիրը։
6) 1950-1970-ական թթ. Խորհրդային Ադրբեջանում փակվել է 80 հայկական դպրոց։
7) Մատենադարանի և Պատմության թանգարանի շենքերը նախագծվել և կառուցվել են 1920-1930-ական թվականներին։

64 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ։**

1) Ալեքսանդր Մակեդոնացու հսկայածավալ պետությունը Ք. ա. 301 թ. բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին սահմանակից Սելևկյան պետությունն էր։
2) Երվանդ IV Վերջինը զոհվել է Մեծ Հայքի հոգևոր կենտրոն Բագարան քաղաքի պաշտպանության ժամանակ։
3) Մինչև Ք. ա. III դարի վերջը Հայաստանին տիրելու Սելևկյան տերության փորձերն ապարդյուն են անցնում, քանի որ Մեծ և Փոքր Հայքերը գործում էին միասնաբար։
4) Կամբիզի մահվանից հետո Աքեմենյան տերության մեջ սկսվում են գահակալական կռիվներ, որոնք ավարտվում են Դարեհ I-ի հաղթանակով, սակայն նրա իշխանության իրավականությունը Հայաստանը չի ճանաչում։
5) Հայաստանի սատրապ Երվանդ III-ը ամուսնացած էր Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II-ի դստեր հետ և բարձր դիրք էր գրավում տերության մեջ։
6) Օգտվելով Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ III-ի՝ Մակեդոնացուց կրած պարտություններից՝ հայերը դեռևս Գավգամելայի ճակատամարտից առաջ հռչակում են Մեծ և Փոքր Հայքերի անկախությունը։
7) Մենոն զորավարին չհաջողվեց գրավել Բարձր Հայքի ոսկու հանքերը, որից հետո Ալեքսանդրն նոր զորքեր ուղարկեց Հայաստան։

65 **Տիգրան II-ի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների տրված շարքում ո՞ր երկուսն են խախտում ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը։**

1) Կորդուքի վերամիավորումը Մեծ Հայքին։
2) Վիրքի և Աղվանքի հպատակեցումը։
3) Ադիաբենեի, Միգդոնիայի միացումը հայկական թագավորությանը։
4) Գոդերձ II-ի Պարթևստանում գահ բարձրանալը։
5) Մարաստանի թագավոր Միհրդատի և Տիգրան II-ի դստեր ամուսնությունը։
6) Պտղոմայիս քաղաքի նվաճումը։
7) Հաշտության պայմանագրի կնքումը Գոդերձ II-ի և Տիգրան II-ի միջև։
8) Հայկական բանակի մուտքը Անտիոք։

66 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1) Անիի գրավումը Ալփ Արսլանի զորքերի կողմից։
2) Կիլիկիայում թագավորական իշխանության հանձնումը Գի Լուզինյանին։
3) Խլաթ քաղաքի պաշարումը Զաքարե ամիրսպասալարի կողմից։
4) Լևոն I-ի թագադրման հանդիսավոր արարողությունը։
5) Գագիկ II-ի տեղափոխվելը Կապադովկիա։
6) Սիս մայրաքաղաքի գրավումը մամլուքների կողմից։
7) Թագավորական իշխանության հանձնումը Լևոն V-ին։

67 **Երևանի պետական համալսարանին վերաբերող իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1) Համալսարանում դասավանդելու հրավերի ուղարկումը Նիկողայոս Մառին։
2) Հակոբ Մանանդյանի ընտրվելը պետական համալսարանի ռեկտոր։
3) Պատմալեզվաբանական ֆակուլտետի տեղափոխվելը Երևան։
4) ՀՀ կառավարության որոշման կայացումը պետական համալսարանի հիմնադրման մասին։
5) Համալսարանական ընդհանուր հանձնաժողովի ստեղծումը Թիֆլիսում։
6) Համալսարանի հանդիսավոր բացումը Ալեքսանդրապոլում։
7) Յուրի Ղամբարյանի նշանակվելը պետական համալսարանի ռեկտոր։

68 **Կատարե՛ք համապատասխանեցում։**

Իրադարձություն	*Տարեթիվ*
ա. Երևանի գլխավոր հատակագծի կազմումը Ալ. Թամանյանի կողմից	1) 1963 թ.
բ. Պարի պետական անսամբլի ստեղծումը	2) 1929 թ.
գ. Օպերայի և բալետի պետական թատրոնի բացումը	3) 1935 թ.
դ. Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը	4) 1924 թ.
ե. Պետական կոնսերվատորիայի բացումը	5) 1923 թ.
զ. Երևանի դրամատիկական թատրոնի հիմնադրումը	6) 1933 թ.
է. «Նամուս» համր ֆիլմի առաջին անգամ էկրան բարձրանալը	7) 1954 թ.
	8) 1925 թ.

ա	բ	գ	դ	ե	զ	է

69

Վանի թագավորության արքայի անունը համապատասխանեցրե՛ք այն իրադարձությանը, որը տեղի է ունեցել նրա կառավարման շրջանում:

Արքա

ա. Սարդուրի I
բ. Իշպուինի
գ. Մենուա
դ. Արգիշտի I
ե. Սարդուրի II
զ. Ռուսա I
է. Ռուսա II

Իրադարձություն

1) Թագավորության հարավ-արևմտյան սահմանը հասցվել է Միջերկրական ծովի ավազանին:
2) Կատարվել է գրային բարեփոխում, ստեղծվել տեղական սեպագիրը:
3) Ընդդեմ Ասորեստանի՝ դաշինք է կնքվել Մարաստանի արքա Աժդահակի հետ:
4) Բարեկամական և դաշնակցային հարաբերություններ է հաստատվել կիմերների հետ:
5) Վանի թագավորությունը վերածվել է գերտերության:
6) Կատարած հաղթարշավների շնորհիվ ստեղծվել է Վանի աշխարհակալությունը:
7) Սևանա լճի ավազանում վերակառուցվել է խոշոր ամրոցներ՝ Խալդի և Թեյշեբա աստվածների անուններով:
8) Թագավորությունը տարածվել է մինչև Տիգրիսի վերին հովիտ:

ա	բ	գ	դ	ե	զ	է

70 **Տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «սխալ է», «չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը։**

1) Ք. ա. 36 թվականին Պարթևստան արշավող Մարկոս Անտոնիոսի ամբողջ զորքը կենտրոնացվել է Կարին գավառում։
2) Ք. ա. 3 թվականին Օկտավիանոս Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկել իր որդեգիր Գայոս Կեսարին, որը գահընկեց է արել Տիգրան IV-ին։
3) Տիգրան III-ի շեշտված հռոմեական դիրքորոշման վկայությունը նրա լատինատառ մակագրությամբ դրամների առկայությունն է։
4) Ք. ա. 8 թվականին Պարթևստանը Հայաստանից գրավեց Ատրպատականը և այնտեղ թագավոր կարգեց Արիոբարզանեսին։
5) Ք. ա. 53 թվականին հռոմեացիներին Ասորիքից դուրս մղելու պայքարում պարթև թագաժառանգ Բակուրին օժանդակել է հայազգի զորավար Մուշեղը։
6) Արտավազդ II-ի վրեժը լուծել է Արտաշես II-ը, ով հոր մահապատժի լուրն իմանալով՝ հրամայել է սրի քաշել Հայաստանում գտնվող հռոմեացիներին։